ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12-ը հունիսի 2020թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի գիտաուսումնական կենտրոնի պետ, փոխգնդապետ, Վ. Մելքոնյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի գրադարանի պետ, ենթասպա Ա. Հակոբյան
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ -ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող հաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **դասախոսի ծառայության** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ -ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակը	Նախահաշվային Ընդհանուր գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպության					
					Հ/հ	Անվանումը	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/			
							Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին
Դասախոսի ծառայություն, այդ թվում										
1.	«Ռազմավարական կառավարում»	ակադեմիական ժամ	35	175000	1.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	140,000	5,775	29,155	174,930
2.	«Մշակութաբանություն»	ակադեմիական ժամ	6	30000	1.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	24,000	990	4998	29,988
3.	«Ռազմավարական կառավարում»	ակադեմիական ժամ	50	250000	1.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	200,000	8,250	41,650	249,900
4.	«Մշակութաբանություն»	ակադեմիական ժամ	14	70000	1.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	56,000	2,310	11,662	69,972

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 **18.06.2020թ.-ին** կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ը** հրավերի պահանջներին համապատասխան գնահատված և հայտ ներկայացրած միակ մասնակիցն էր, ուստի հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 3.6 կետի պահանջը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և գների նվազեցման նպատակով **24.06.2020թ. ժամը 11:00-ին** ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) առաջարկված գների նվազեցման նպատակով **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ի** հետ վարել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ին** էլեկտրոնային ձևով ծանուցեց բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

24.06.2020թ., ժամը 11:00-ի կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը ծանուցված **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ը** չներկայացավ, ուստի հայտով առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության:

3.4 Ըստ ներկայացված տվյալների **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ը** ԱԱՀ վճարող է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **29.06.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված և ընտրված մասնակից հայտարարել՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ին:**

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ -ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, **սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ էր նեկայացրել մեկ մասնակից:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-14/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը. ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Ասատրյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Վ. Մելքոնյան
Գնահատող	Ա. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան